ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԴՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ 1724 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը XVIII դարի 20-ական թթ. օսմանյան նվաճողների դեմ Անդրկովկասի ժողովուրդների մղած պայքարի ուշագրավ դրվագներից է։ Թուրք զավթիչներին ցույց տված դիմադրության վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում Աբրահամ Երևանցին իր «Պատմութիւն պատերազմաց»-ում։ Երևանի պաշտպանության մասին որոշ տվյալներ կան նաև հայկական[1] և թուրքական[2] աղբյուրներում, ինչպես և XVIII դարի 20-ական թթ. Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Իվան Նեպլյուևի՝ իր կառավարությանը հղած զեկուցագրերում, որոնք պահվում են Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի «Ռուսաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ» ֆոնդում[3]։ Համադրելով այս աղբյուրներից քաղած տեղեկությունները Աբրահամ Երևանցու տվյալների հետ, տեսնում ենք, որ դրանք ընդլայնում են մեր պատկերացումները այդ կարևոր դեպքերի վերաբերյալ։

Պարսկաստանի տնտեսական և քաղաքական կյանքի ճգնաժամը, հայ և վրաց ժողովուրդների ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի ուշադրությունը բևեռեցին Պարսկաստանում և Անդրկովկասում ստեղծված իրադրության վրա. սուլթանական կառավարությունը որոնեց օգտվել այդ իրադրությունից՝ Անդրկովկասի և Պարսկաստանի վրա հարձակվելու համար։ Այդ նպատակով Բարձրագույն Դուռը կապեր էր հաստատել Դաղստանի ֆեոդալներ Հաջի Դաուդի և Սուրխայ խանի հետ, որոնք իրենց հրոսակների ասպատակություններով թուլացնում էին հայերի և վրացիների ուժերը։

Արդեն 1722 թ. աշնանը թուրքերը զորքեր են կենտրոնացնում Անդրկովկասի սահմանների մոտ։ Այդ մասին ականատեսներից մեկը վկայում է. «Սեպտեմբեր Ը (8) եկի Ղարս, տեսի՝ որ Ղարս փաշեն թողման չէ ցորեն գընայ զղլբաշի երկիրն և մարթ էլ չեն թողման գնայ... թունդ բանի վերայ ան...»[4]։ Նույն աղբյուրի վկայությունից երևում է, որ այդ ժամանակ մեծ քանակությամբ զենք, ռազմամթերք էր կուտակվում Կարինում[5]։

Անդրկովկասը նվաճելու թուրքական մտադրությունը արևմտաեվրոպական տերությունների և առաջին հերթին Անգլիայի հավանությանն էր արժանանում։ Անգլիան, ի դեմս Ռուսաստանի տեսնելով իր տնտեսական և քաղաքական մրցակցին, ոչ մի կերպ չէր ուզում թույլ տալ, որ Ռուսաստանի դիրքերն Անդրկովկասում ամրանան, հրահրում էր Թուրքիային՝ նվաճելու Անդրկովկասը, նրան խոստանալով նյութական և ռազմական անհրաժեշտ օգնություն։ Կոստանդնուպոլսի անգլիական դեսպանը ջանում էր հավատացնել թուրքական կառավարությանը, որ Ռուսաստանի դեմ պատերազմելու դեպքում Թուրքիան միայնակ չի մնա, և որ Լեհաստանի, Պրուսիայի, Անգլիայի ու Դանիայի թագավորները միմյանց միջև կնքել են Ռուսաստանի դեմ ուղղված հարձակողական դաշինք[6]։ Անգլիական դիվանագիտությունը ներշնչում էր թուրքական կառավարությանը, որ եթե ռուսները գրավեն Ադրբեջանը, Հայաստանի ու Վրաստանի՝ Պարսկաստանին ենթարկվող մասերը, «...ապա թուրքական հպատակները՝ հայերը և վրացիները (իմա՝ Արևմտյան Հայաստանի և Արևմտյան Վրաստանի ազգաբնակչությունը,—Վ. Մ.), իրենք կանցնեն ռուսա-

---

1 Տե՛ս ՀՍՍՌ Մատենադարան, Ձեռագիր № 2121, 9648։

2 Ա. Հ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. հատ. Ա, Երևան, 1961։

3 Архив внешней политики России, այսուհետև՝ АВПР, ֆ. „Сношения России с Турцией", այսուհետև՝ СТ.

4 Տե՛ս «Պետրոս դի Սարգիս Գիլանենցի ժամանակագրութիւն», «Կոռնկ Հայոց աշխարհի», 1863, № 3, էջ 193։

5 Տե՛ս նույն տեղում, էջ 192—193։

6 АВПР, ֆ. „Сношения России с Арменией", այսուհետև՝ СРА, 1723, գ. № 3, թ. 63։

կան հպատակության ներքո, իսկ այնտեղից հեռու չէ նաև Տրապիզոնը. դրա հետեանքով ժամանակի ընթացքում թուրքական կայսրություն ծայրահեղ քայքայման կենթարկվի»[7]։

1723 թ. գարնանը թուրքական բանակը ներխուժեց Վրաստան։ Նույն թվականի հունիսին թուրքերը գրավեցին Թրիլիսին։ Դրանից հետո նրանք մտադիր էին արագ շարժվել դեպի արևելք և նվաճել ողջ Անդրկովկասը։ Թուրքական արշավանքը էլ ավելի վատացրեց հայերի և վրացիների վիճակը։ Այժմ արդեն Անդրկովկասի ժողովուրդները պետք է պայքարեին ոչ միայն քաղաքական հոգևորը ապրող սեֆյանների ու լեզգի լեռնականների պարբերաբար կրկնվող ասպատակությունների, այլև թուրքական կանոնավոր բանակի թվով գերազանց ուժերի դեմ։

Բնական է, որ այս իրադրության պայմաններում դաշինք կնքվեց նախկին հակամարտ ուժերի՝ Վախթանգ VI-ի և նրա ախոյան Կախեթի թագավոր Կոստանդին II-ի (Մահմեդ Ղուլի խանի), ինչպես և Ղարաբաղի հայկական ողնախների ու Դանձակի աղրիջանցիների միջև՝ ուղղված թուրքական արշավանքի դեմ։ Հարկ է նշել, որ հակաթուրքական ուժերի համախմբումը և նրանց միջև համերաշխություն ստեղծելը համապատասխանում էր նաև ռուսական կառավարության քաղաքականությանը Անդրկովկասում։ 1724 թ. Անդրկովկաս է ուղարկվում Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետը, հանձնարարություն ունենալով նպաստելու Անդրկովկասի ժողովուրդների միասնական հակաթուրքական ճակատ ստեղծելուն և դրանով իսկ կասեցնելու թուրքերի առաջխաղացումը դեպի արևելք և հյուսիս։

Աղբյուրներից պարզ երևում է, որ Անդրկովկասի ժողովուրդները միասնական ուժերով համառ պայքար են մղել թուրք նվաճողների դեմ։ Ահա թե ինչ է գրում այդ մասին թուրք պատմիչ Չելեբի-Զադեն. «Բռնված Կրգրլբաշ գերիների տված ցուցմունքներից պարզվեց, որ Երևանի ժողովուրդը Գենջեից, Շեմս-էլ-Դինլիից[8] և Մուհամմեդ-Կուլի խանից օգնություն են խնդրել, որ Մուհամմեդ-Կուլի խանը իր հավաքած լեզգի և վրացի զինվորներով կենտրոնացել է Ակշա-Կալայում (իմա-Լոռիում — Վ. Մ.) և մտադիր է Երևանին օգնության գնալ[9]։

Այնուհետև նա հայտնում է, որ թուրքերին հաջողվում է ձեռք բերել Երևանից գենջեցիներին և Մուհամմեդ-Կուլի խանին ուղղված նամակները, որոնք հաստատում են գերիների տված տեղեկությունները. Նույն պատմիչը, շարունակելով խոսել Կոստանդին II-ի գործունեության մասին, հաղորդում է, որ վերջինիս հպատակություն են հայտնել շատ էրիսթավներ, թավադներ և ազնվաուրներ և որ նա 10 հազարից ավելի սև վահանավոր (կարակալբան) մարդկանցով և էրիսթավներով Ակշա-Կալայում միացել է կզլբաշ սիփահիների հետ և մտադիր է եղել Երևանին օգնության գնալ։

Վերը բերված քաղվածքը ուշագրավ է նրանով, որ նույնիսկ թուրք պատմիչը վկայում է թուրքական նվաճողների դեմ հայ և վրաց ժողովուրդների համառ պայքարի և միասնական դիմադրության մասին։ Թուրքական աղբյուրի այդ վկայությունը հաստատող տեղեկություն կա Պետրոս դի Սարդիս Գիլանենցի օրագրում. «Օգոստոսի Բ-ումն (2-ին) ը (2) շամախեցի թուրք Թավրիզու շահիցն չափար արևկ Ըռնշտ՝ որ գնայ Թիմիջանայ վէզրին կուշտն։ Էս ը (2) չափարն ասելան, թէ Վախտանկ խանըն և Կախեթու վալի Մամատ Ղուլի խանն խաշտիլ ան և միայտեղ ուրենց ասկարօվն գնացեր ան Յարևանս»[10]։

1724 թ. թուրքական զորքերը հարձակում ձեռնարկեցին Երևանի ուղղությամբ։ Թուրք պատմագիր Չելեբի-Զադեն տալիս է հետևյալ տեղեկությունը. Երևանը գրավելու համար սերասքեր նշանակվեց Արիֆի-Ահմեդ փաշան՝ իր սրամտության տակ ունենալով 1000 մարդ սիփահի և զինակիր (սիլահդար), 27 հազար ենիչերի և «սերդեն կեչտի» զինվորներ, 2500 ջերեջի, թրնդանոթաձիգ և թնդանոթի կառապան, ընդամենը՝ 60 հազարից ավելի զինվորներ[11]։ Թուրքական բանակի առաջապահ զորամասերը Յալդուս-Հասանի և Ղոչ-Ալիի հրամանատարությամբ մարտի բռնվեցին Երևանի խանի բանակի հետ Եղվարդ գյուղի մոտ։ Թուրքական բանակին հաջողվեց փշրել խանի զորքերի դիմադրությունը և շարժվել դեպի Երևան։

---

[7] С. М. Соловьев, История России, հ. 18, էջ 691։

[8] Առաջնորդը աղրիջանական այն քոչվոր ցեղախմբի, որ բնակվում էր այժմյան Շամշադինի շրջանում։

[9] Ա. Խ. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 139—140։ Տե՛ս նաև M. Z. Shay. The Ottoman empire from 1720 to 1734, Urbana, 1944, էջ 100։

[10] «Կոռունկ հայոց աշխարհի», № 2, էջ 93, նաև M. Z. Shay, նշվ. աշխ. էջ 100։

[11] Ա. Խ. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 141—142։

Դեպի Երևան արշավող թուրքական բանակի կատարած ավերածությունների և գերեվարությունների մասին աղբյուրները հաղորդում են սարսափեցուցիչ տեղեկություններ. «Եւ ի մրրկամպ մառախլապատ ժամանակին, յուրում ոչ էին առեալ զրերքն, դայրացմամբ և բարկութեամբ զինուր և սուսերօք յարեան ի վերայ քաղաքին և ամենայն տանն Արարատու։ Եւ ո՞ կարողացի բաւել դանչավութիւն աղէտիցն, ողբոց և աղաղակացն,— և այնուհետև շարունակվում է,— ուստի սուր ի վերայ եդեալ անողորմարար առ հասարակ կոտորեցին զբնակիչսն երկրին այնմիկ, վարդապետք և քահանայք, սարկավագուք և եկեղեցականք, իշխանք և իշխեցեալք, մեծամեծ և փոքունք, անմեղք և մեղանչականք, հայք ու պարսիկք»[12]։

Հաղթանակ տանելով Եղվարդի մոտ, թուրքերն իրենց համար հանապարհ բացին դեպի Երևան և հույս ունեին առանց լուրջ դիմադրության գրավել քաղաքը։ «Եւ յետ առնելոյն զՎիրս յարեան զայրացմամբ ի վերայ տանն Արարատու. ճակատ առ ճակատ պատերազմունս մղելով ընդդէմ հողաշէն և բարձրարերձ ամրոցին և դղեկին Երևանայ։ Իսկ ազգն պարսից յօժարութեամբն իւրեանց ոչ ետուն զրերքն, այլ ընդդիմութեամբ մաքառեալ ամրացեալք ի դղեկին ընդդէմ կացեալ ազգին հզօրաց և արանցն քաջասրտաց պատերազմս տալով ամիսս երկու աւելի կամ պակաս»[13],— շարունակում է արդեն մեզ ծանոթ դեպքերին ականատես դպիր Հովակիմը։

Այսպիսով, թուրքական զորքերի դեմ Երևանում հայերի հետ միասին պայքարում էին նաև վրացիները։

Իրավելով Երևանի արվարձանները. թուրք զավթիչները դաժան դատաստան տեսան բնակչության հետ, 10 հազարից ավելի մարդ սրի քաշեցին, նույնքան էլ գերի վերցրին։ Կողոպուտի ենթարկեցին բնակչության ունեցվածքը, հողին հավասարեցնելով նրանց տները[14]։

Ինչպես երևում է դպիր Հովակիմի վերը բերված վկայությունից, Երևանի ամրոցը դիմադրել է թուրքական բանակին մոտ երեք ամիս, իսկ քաղաքի արվարձանների հերոսական պաշտպանությունը, ըստ պատմիչ Աբրահամ Երևանցու տվյալների՝ տևել է ապրիլից մինչև հունիս։ Կռվող հիմնական ուժը շրջակա գյուղերի և բուն Երևանի հայ ազգաբնակչությունն է եղել։ Արխիվային վավերագրերը լրացուցիչ մանրամասնություններ են հաղորդում այդ իրադարձությունների մասին։

Ռուսական դեսպան Իվան Նեպլյուևը, գտնվելով Կոստանդնուպոլսում և շփման մեջ լինելով թուրքական կառավարող շրջանների հետ, իր զեկուցագրերում հանգամանալից տեղեկություններ է հաղորդում ռուսական արքունիք՝ թուրքական բանակի ռազմական գործողությունների մասին։ Այդ զեկուցագրերից երևում է, որ Երևանի պաշտպանությանը մասնակցել են նաև Կախեթի թագավոր Կոստանդին II-ին ենթակա վրացական զինվորական ուժերը։

Երևանի բնակչության և ամրոցի կայազորի համառ դիմադրությունը հուսահատություն է առաջացնում թուրք զինվորների մեջ, նրանցից շատերը փախուստի են դիմում, թուրքական բանակում ծայր է առնում դասալքությունը,— ինչպես խոստովանում է մեզ արդեն ծանոթ թուրք պատմագիր Չելեբի-Զադեն։ Սուլթանական կառավարությունը հարկադրված լրացուցիչ ուժեր է ուղարկում Երևանը պաշարող բանակին, Թավրիզ ուղարկվելու համար նախատեսված 3000 եգիպտական զինվորները, իբրև օժանդակ ուժ, շարժվում են դեպի Երևան[15]։ Ի. Նեպլյուևը, 1724 թ. սեպտեմբերի 1-ին գրած իր զեկուցագրում խոսելով Անդրկովկասում գործող թուրքական բանակի ռազմական գործողությունների մասին, հաղորդում է, որ «Գանձակի գրավումը հետաձգված է մինչև Երևանի գրավումը, որովհետև Գանձակ ուղարկված զորքը հարկ եղավ ետ բերել՝ Երևանը գրավելու համար»[16]։

Երևանի հերոսական դիմադրությունը կասեցնում էր նաև Պարսկաստանում գործող թուրքական բանակի առաջընթացը։ Այսպես, օրինակ, նույն զեկուցագրում Նեպլյուևը հաղորդում է, որ Արդուլլահ փաշան խոյը գրավելուց հետո չի շարժվել Թավրիզի վրա, քանի դեռ Երևանը չէր գրավվել։ Նույն փաշան գրել է Բարձրագույն Դռանը, որ ինքը մտադիր է եղել միանալ սերասքեր Արիֆի-Ահմեդ փաշայի հետ Երևանի մոտ, որովհետև Արիֆի-Ահմեդ փաշան ի վիճակի չէ գրավել Երևանը, քանի որ Երևանում պարսիկները և հայերը, ինչպես նաև որոշ քանակի

---

[12] Մատենադարան, ձեռ. № 2121. էջ 368, տե՛ս նաև Hanway. „Zuverlassigen Beschreibung seiner Reisen von London durch Russland...", հատ. I, էջ 150։

[13] Նույն տեղում, էջ 367։

[14] Ա. Խ. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 143։

[15] Ա. Խ. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 146։

[16] АВПР, ф. СРТ, 1724, д. 6. л. II, р. 443։

վրացիներ, ամենեին էլ չեն դանկանում թուրքերին հպատակվել և համառորեն պաշտպանվում են, իսկ թուրքերը թնդանոթներից քաղաքը չեն կարող վնասել, քանի որ բավարար քանակով արկեր չունեն, քաղաքը չեն կարող վերցնել նաև գրոհով, որովհետև քաղաքի կեսը շրջապատված է զառիթափ լեռներով, իսկ մյուս մասը՝ ջրով[17]։ Երևանը գրավելու համար թուրքերը Կոստանդնուպոլսից լրացուցիչ զորք և հրետանի են ստացել, ուղարկվել է նաև ռազմական ինժեներ իսպանացի Կորդոսը։ Ի. Նեպլյուևը հաղորդում է նաև, որ Երևանի բերդը պաշտպանելու համար պարսիկների ուղարկած օգնական 10 հազարանոց դորախումբը թուրքերի կողմից ջախջախվել է Նախիջևանի մոտ, և, այդպիսով, Նախիջևանը գրավելուց հետո, Երևանի կապը Պարսկաստանի հետ կտրվել է[18], հետևարար պաշտպանության ամբողջ ծանրությունը ընկել է տեղի ազգաբնակչության և կայազորի վրա։

Նեպլյուևի այս զեկուցագիրը ուշագրավ է ոչ միայն նրանով, որ տալիս է Երևանի մոտ տեղի ունեցած ռազմական գործողությունների նկարագրությունը, այլև առաջին հերթին նրանով, որ հետաքրքրական լրացումներ է մտցնում Աբրահամ Երևանցու տվյալների մեջ. զեկուցագրի տրվյալները բերդի պաշտպանության մասին հաստատվում են նաև Հովակիմ դպրի հիշատակարանի վկայություններով։ Այդ լրացումներից ամենակարևորն այն է, որ Երևանի պաշտպանությունը ավելի երկար է տևել, և որ Երևանի պաշտպանությանը մասնակցել են ինչպես հայերը, այնպես էլ աղբրեջանցիները ու վրացական զորքերը։

Այն հանգամանքը, որ Երևանի հերոսամարտերին մասնակցել են նաև վրացական ուժերը, հաստատվում է Պետրոս դի Սարգիս Տիյանենցի օրագրի տվյալներով, ուր ակնարկ կա այն մասին, թե Մահմեդ Ղուլի խանը զորքով գնացել է Երևանը պաշտպանելու[19]։ Այս առավել հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք, որ այդ ժամանակ Երևանի խանությունը ենթարկվում էր Մահմեդ Ղուլի խանին, որը Կախեթի թագավորն էր միաժամանակ, ուներ վրացական զորք և համառ պայքար էր մղում Անդրկովկաս ներխուժած թուրքական բանակի դեմ։ Հավանաբար Մահմեդ Ղուլին էր, որ Երևանի պաշտպանությունն ուժեղացնելու համար վրացական օժանդակ ուժեր էր ուղարկել։ Հենց այդ էլ նկատի ունի Ի. Նեպլյուևը, երբ գրում է, որ Երևանում նաև վրացական զորք կա։

Իր մի այլ զեկուցագրում, խոսելով Երևանի մասին, Նեպլյուևը հաղորդում է, որ Երևանը դեռևս գրավված չէ, բնակիչները կատաղորեն պաշտպանվում են, թուրքերին շատ վնաս են հասցրել, դրա համար էլ թուրքերը այնտեղ լրացուցիչ զորք և հրետանի են ուղարկում[20]։ 1724 թ. սեպտեմբերի 25-ի զեկուցագրից տեղեկանում ենք, որ «այն զորքերը, որոնք ուղարկված էին Կանձակ, նաև Եգիպտոսից ուղարկված 3000-ոց զորախումբը, բոլորը կենտրոնացված են Երևանի մոտ, և այժմ այնտեղ գտնվում են 30.000 զինվորական և նույն քանակի էլ անկանոն զորք, պաշարել են այդ քաղաքը և ճանապարհ են հարթում գրոհի համար ու ամեն օր մարդ են ուղարկում քաղաք անձնատուր լինելու առաջարկով, որին քաղաքից պատասխանում են, որ կարող էին նրանք թուրքերին հանձնվել, սակայն լավ գիտեն թուրքերին, որ իրենց պիտի գերեն և բարբարոսաբար վարվեն իրենց հետ, դրա համար էլ ավելի բարվոք են համարում մինչև վերջին մարդը կռվելով մեռնել, քան գերի դառնալ, և ասում են,—շարունակում է Ի. Նեպլյուևը,—որ քաղաքում զինվորական մարդկանց թիվը ընդամենը 5000 է, իսկ Բարձրագույն Դուռը միշտ հրամարտակներով պահանջում է, որքան հնարավոր է գրոհով շուտ գրավեն քաղաքը, և հուսով են, որ շուտով այդ քաղաքը իրենց ձեռքում կլինի...»[21]։

1724 թ. հոկտեմբերի 10-ի զեկուցագրից երևում է, որ Երևանի բերդի կայազորը, թվով 5000 մարդ, հարկադրված բանակցությունների մեջ է մտնում թուրքական բանակի հրամանատարության հետ Երևանի բերդը հանձնելու մասին, և թուրքական կողմից իրենց անձի ու գույքի անձեռնմխելիության երաշխիք ստանալով՝ սեպտեմբերի 22-ին քաղաքը հանձնում է թուրքերին։ Այդ մասին Հովակիմ դպիրը գրում է. «Բայց յետոյ նքտեալ ի սովու ետուն զամրոցն իւրեանց ազգին իսմայելեան և Ինազանդեցան նոցա, քանզի անտիրացեալք էին և ոչ ոք էր որ հասանէր ր թիկունս կոյս առ ի օգնել և կամ ազատել զնոսա ի ձեռաց օտար թշնամեաց»[22]։

---

17 АВПР, նույն տեղում, թ. 445։
18 АВПР, նույն տեղում, թ. 445։
19 «Կոռունկ Հայոց աշխարհի», N 2, էջ 93, 1863։
20 АВПР, նույն տեղում, թ. 440։
21 АВПР, 1724, գ. 6, մ. 2-րդ, թթ. 457—457ա։
22 Մատենադարան, ձեռ. N 2121, էջ 367։

Երևանի գրավման լուրը Կոստանդնուպոլիս է հասնում հոկտեմբերի 8-ին, իսկ հաջորդ օրը թուրքական կառավարությունը պաշտոնապես այդ իրադարձությանը իրազեկ է դարձնում բոլոր օտարերկրյա դեսպաններին, այդ թվում նաև Իվան Նեպլյուևին։ Թե ինչպիսի կարևորություն էր տալիս Երևանի գրավմանը սուլթանական կառավարությունը, երևում է նաև նրանից, որ այդ կապակցությամբ Կոստանդնուպոլսում տոնակատարություններ են տեղի ունենում։ «Տոնակատարությունը Կ. Պոլսում բաղկացած էր հրավառություններից, լուսավորություններից և ֆրանսիական երկու ռազմանավից տրված 126 հրետանային համազարկից»[23]։ Նույն Չելեբի-Զադեի ասելով Երևանի գրավման կապակցությամբ կազմակերպված տոնակատարությունը տևել է 10 օր, որին նախորդել է մեծ և փառավոր ընդունելություն սուլթանական պալատում։ Այս փաստը պերճախոս վկայում է այն մասին, թե ինչպիսի մեծ կարևորություն էին տալիս Երևանի գրավմանը սուլթանական արքունիքում։

Այսպիսով, արխիվային նյութերը նոր լույս են սփռում 1724 թ. հերոսամարտերի պատմության վրա, լրացնում և ճշգրտում են Արրահամ Երևանցու տվյալները։

Այդ նյութերը նախ և առաջ վկայում են, որ Երևանը թուրքական բանակը գրավել է ոչ թե 1724 թ. հունիսի 7-ին, ինչպես հաղորդում է մեզ Արրահամ Երևանցին, այլ ավելի ուշ, նույն թվականի սեպտեմբերի 22-ին, հետևաբար տեղի ազգաբնակչության ու բերդի կայազորի դիմադրությունը թուրքական բանակին տևել է մինչև աշուն։

Երկրորդ. Երևանի հերոսական պաշտպանությանը մասնակցել են հայերը, ադրբեջանցիները և վրացիները։ Վերջիններս որպես զինվորականներ ենթարկվում էին Մահմեդ Ղուլի խանին, որն էլ գլխավորում էր թուրքական բանակին դիմադրություն ցույց տալու գործը ինչպես Լոռիում, այնպես էլ Երևանում։

Երրորդ. Երևանը հայկական Սղնախների՝ Դանձակի և Զանգեզուրի հետ միասին այն լուրջ դիմադրության օջախներից էր, որոնք վիժեցրին թուրքական բանակի նախնական ծրագիրը՝ գրավել Կասպիականի ափերը. դրանով իսկ Երևանի հերոսական պաշտպանությունը ակնհայտ օգնություն էր նաև ռուսական զորքերին, որոնք առանց ուժեղ հակառակորդի հետ բախվելու կարողացան գրավել Կասպիականի ափերը։

---

[23] M. Z. Shay, նշվ. աշխ., էջ 120։